ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՕՇԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Հասցեն՝ գ.Օշական Մ.Մաշտոցի փ. 105
հեռ. 091-45-94-83

address: vil. Oshakan M.Mashtots st. 105
cell phone 091-45-94-83

N36

01/03/2017թ.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ՝ Գ. ԳՅՈՉԱԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գյոզալյան

Կից Ձեզ ենք ներկայացնում Օշական համայնքի ավագանու 2017թ. փետրվարի 23-ի հերթական նիստով ընդունած թիվ 8,9,10,11 և 12-Ն որոշումները:

Առդիր 14 էջ:

Invalid signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Օշական, (091)459483, (091)341124, oshakan.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 8

ՕՇԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 38 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի, ''Տեղական տուրքերի և վճարների մասին'' ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի և 25-րդ հոդվածի պահանջներով

Օշական համայնքի ավագանին որոշում է՝

Տեղական տուրքերի դրույքաչափերը հաշվարկել կիրառելով 0,5 գործակիցը,բացառությամբ 4-րդ մասով սահմանված դեպքերի

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ.
- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ.
- 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ.
- 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ:

2)համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժե ղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ 2500 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնայինհամայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 10000 դրամ.

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 25000 դրամ.

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել 1250 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել՝ 5000 դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել՝ 6500 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել՝ 10000 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել՝ 12500 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել՝ 23000 դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել 1250 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել՝ 5000 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել՝ 6500 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել 10000 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել՝ 12500 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել՝ 23000 դրամ.

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ 175 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ 2500 դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 12500 դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 100000 դրամ.

դ. խաղատների համար՝ 250000 դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ 125000 դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ 50000 դրամ.

12) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2600 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7600 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10100 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15100 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 250 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 600 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1100 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2100 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4100 դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7600 դրամ.

13) քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար. օրացուցային տարվա համար՝ հինգ հազար դրամ.

14) ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1800 դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 800 դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ.եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպությունը գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

15) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ.

16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 դրամ.

17) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 250000 դրամ:

18) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1250000 դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 դրամ.

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3500000 դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԻՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԱՆԱՆԻԱ

2. ԱԴԱՄՅԱՆ ՄԱՐԱՏ

3. ԲԱԴԱԼՅԱՆ ՍՈՆՅԱ

4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

5. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀԱՅԿ

6. ՍՄԲԱՏՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Օշական, (091)459483, (091)341124, oshakan.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 9

ՕՇԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով

Օշական համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Օշականի համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը /կից N1.N2.N3.N4.N5 հավելվածների/

2. Ուժը կորցրած ճանաչել Օշական համայնքի ավագանու 07 նոյեմբերի 2016 թվականի Օշականի համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին թիվ 27 որոշման հավելվածները

Հավելված N 1

ՀՀ Արագածոտնի մարզի Օշական

համայնքի ավագանու 2017 թ.

փետրվարիի 23-ի թիվ 9 որոշման

Հաստատել Օշականի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը
Աշխատակիցների թվաքանակը 18
Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 18

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույք.
Համայնքի ղեկավար	1	300000
Համայնքի ղեկ. տեղակալ	1	212000
Համայնքային	ծառայության	պաշտոններ
Աշխատակազմի քարտուղար/1.2-1/	1	211000
Գլխավոր մասնագետ /2.3-1/	1	210000
Առաջատար մասնագետ /3.1-2/	1	140000
Առաջատար մասնագետ /3.1-3/	1	140000
Առաջատար մասնագետ /3.1-4/	1	140000
Առաջատար մասնագետ /3.1-5/	1	140000
Առաջատար մասնագետ /3.1-6/	1	140000
Առաջատար մասնագետ /3.1-7/	1	140000
Առաջատար մասնագետ /3.1-8/	1	140000
Առաջատար մասնագետ /3.1-9/	1	140000
Սպասարկող	անձնակազմ	
Գրադարանի վարիչ	1	140000
Գրադարանի հավաքարար	1	100000
Աղբահան ա/մ-ի վարորդ	1	100000
Հավաքարար	1	100000
Պահակ	1	150000
Հավաքարար	1	100000
Ընդամենը	18	2743000

Հավելված N 2

ՀՀ Արագածոտնի մարզի Օշական

համայնքի ավագանու 2017 թ.

. *փետրվարիի 23-ի թիվ 9 որոշման*

Հաստատել *«Օշականի մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի* աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը
Աշխատակիցների թվաքանակը 12
Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 12

հ/հ	հաստիքի անվանումը	հաստիքի միավոր	դրույքի վճար
1	տնօրեն	1	140000
2	հաշվապահ	1	125000
3	գեղմասվար	1	100000
4	լատ.ամ.պարի ղեկ.	1	77904
5	ժող.պար.խմբ.	1	109126
6	նկարիչ	1	77904
7	գրական խմբի ղեկ.	1	77904
8	գործավար	1	90000
9	պահակ	1	109126
10	ժող. գործ. խմբավար	1	77904
11	հնչյունային ռեժիսոր	1	77904
12	հավաքարար	1	89483
	ընդամենը	12	1152255

Հավելված N 3

ՀՀ Արագածոտնի մարզի Օշական

համայնքի ավագանու 2017 թ.

փետրվարիի 23-ի թիվ 9 որոշման

Հաստատել *«Անահիտ» մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի* աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը
Աշխատակիցների թվաքանակը 25
Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 21,5

h/h	պաշտոն	դրույքը	հաշվ. աշխ.
1	տնօրեն	1	140000
2	գործավար	1	110000
3	մանկավարժ,դերձակ	1	100000
4	հոգեբան	0.5	59524
5	դաստիրակ	0.5	59524
6	պարուս,դաստիրակ	0,75	89286
7	դաստիրակ	0.75	89286
8	դաստիրակ	1	119048
9	դաստիրակ	1	119048
10	երաժ. ղեկ.	1	119048
11	մեթոդիստ	1	100000
12	դաս. օգնական	1	74074
13	դաս. օգնական	1	79226
14	դռնապահ	1	79226
15	դաս. օգնական	1	74074
16	բուժքույր	1	79226
17	խոհարար	1	74074
18	խոհ. օգնական	1	74074
19	հաշվապահ	1	90000
20	տնտեսվար	0,75	55555
21	դաստիրակ	0.25	29762
22	պահակ	1	109126
23	օժանդակ բանվոր	0,5	39613
24	լոգոպետ	0,5	59524
25	դաս. օգնական	1	79226
	ընդամենը	21,5	2101544

Հավելված N 4

ՀՀ Արագածոտնի մարզի Օշական համայնքի ավագանու 2017 թ. փետրվարի 23-ի թիվ 9 որոշման

Հաստատել *«Գայանե» մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի* աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը 27

Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 21,5

հ/հ	պաշտոնը	դրույքը	հաշվ. աշխ.
1	տնօրեն	1	150000
2	գործավար	1	100000
3	հաշվապահ	1	90000
4	դերձակ	0.5	39613
5	բուժքույր	1	74074
6	երաժ. ղեկ.	1	119048
7	դռնապահ	1	79226
8	հոգեբան,լոգոպետ	0.75	80000
9	հավաքարար	0.5	37037
10	տնտեսվար	0.75	59419
11	պահակ	1	94576
12	մանկավարժ	1	119048
13	մեթոդիստ	0.5	89286
14	դաստիրակ	0,5	59524
15	դաստիրակ	0,5	59524
16	դաստիրակ	0,5	59524
17	դաստիրակ	0,5	59524
18	դաստիրակ	1	119048
19	դաս. օգնական	1	74074
20	դաս. օգնական	1	74074
21	դաս. օգնական	1	74074
22	դաս. օգնական	1	74074
23	դաստիրակ	0,5	59524
24	խոհարարի օգնական	1	79226
25	դաստիրակ	0,5	59524
26	խոհարար	1	80822
27	գանձապահ	0.5	39613
	ընդամենը	21.5	2103476

Հավելված N 5

ՀՀ Արագածոտնի մարզի Օշական

համայնքի ավագանու 2017 թ.

փետրվարի 23-ի թիվ 9 որոշման

Հաստատել *երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի* աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը
Աշխատակիցների թվաքանակը 15
Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 258ժ/15,7դ

հ/հ	պաշտոնը	ժամ/դրույք	աշխատավարձ
1	տնօրեն	1դ	120000
2	հաշվապահ	1դ	90000
3	տնտեսվար	1դ	72751
4	դաշ. լարող	1դ	72751
5	հավաքարար	1դ	72751
6	դաս. դաշնա.	36ժ /1.5դ	136356
7	դաս. դաշնա.	33ժ/1.37դ	124217
8	դաս. դաշնա.	28ժ /1.17դ	91162
9	դաս. քամանչի	33ժ /1.37դ	130754
10	դաս. քանոն	28ժ /1.17դ	91162
11	դաս. թավ. ջութ.	8ժ /0.3դ	32523
12	դաս. շվի	28ժ /1.17դ	103845
13	դաս. դհոլ	30ժ /1.25դ	103628
14	դաս. երգխումբ.	8ժ /0.3դ	25712
15	դաս. սոլֆ.	26ժ /1.1դ	102706
	.		
	ընդամենը	258ժ/ 15.7դ.	1370318

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԻՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԱՆԱՆԻԱ

2. ԱԴԱՄՅԱՆ ՄԱՐԱՏ

3. ԲԱԴԱԼՅԱՆ ՍՈՆՅԱ

4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

5. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀԱՅԿ

6. ՍՄԲԱՏՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Օշական, (091)459483, (091)341124, oshakan.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 10

ՕՇԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 19-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով

Օշական համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Օշական գյուղական համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող հետևյալ դրույքաչափերը՝

2. Ուժը կորցրած ճանաչել Օշական համայնքի ավագանու 27 դեկտեմբերի 2016 թվականի թիվ 37 որոշումը:

1.Օշական գյուղական համայնքի երաժշտական դպրոց հաճախող յուրաքանչյուր երեխայի համար 2017թ. սահմանել ամսական ուսման վարձը	3000դրամ
2.Օշական գյուղական համայնքի մ/մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար 2017թ. օրական սննդի համար վարձը սահմանել	300դրամ
2/1.Ընտանիքից մ/մանկապարտեզ հաճախող երեք երեխաներից մեկ երեխայի ամսական վարձը չգանձել:	
2/2. Այլ համայնքներից մ/մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար 2017 թ. օրական սննդի համար վարձը սահմանել	400 դրամ
3.Օշական գյուղական համայնքի մշակույթի տուն՝ պարի խմբակներ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար 2017թ. սահմանել ամսական վարձը	3000դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԻՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԱՆԱՆԻԱ

2. ԱԴԱՄՅԱՆ ՄԱՐԱՏ

3. ԲԱԴԱԼՅԱՆ ՍՈՆՅԱ

4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

5. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀԱՅԿ

6. ՍՄԲԱՏՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Օշական, (091)459483, (091)341124, oshakan.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 11

ՕՇԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԾՐՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Հիմք ընդունելով Արծրուն Պետրոսյանի դիմումը և ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով

Օշական համայնքի ավագանին որոշում է՝

Զիջել Օշական գյուղի բնակիչ Արծրուն Պետրոսյանին պատկանող /վազ 21065 մակնիշի/ ավտոմեքենայի գույքահարկը՝ 15000 ՀՀ դրամի չափով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԻՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԱՆԱՆԻԱ

2. ԱԴԱՄՅԱՆ ՄԱՐԱՏ

3. ԲԱԴԱԼՅԱՆ ՍՈՆՅԱ

4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

5. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀԱՅԿ

6. ՍՄԲԱՏՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Օշական, (091)459483, (091)341124, oshakan.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 12-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետով՝ Օշական գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, Աշոտ Ադիբեկյանիսեփականություն հանդիսացող /02-113-0033-0026 *ծածկագրից*/0,0100 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի

կառուցապատման*հողատեսքի* նպատակային նշանակությունը փոփոխելուն և այն Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կապիգործառնական նշանակության հողերի շարքը փոխադրելուն՝ <<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ-ի կողմից տեղադրված կապի կայանի զբաղեցրած հողամասի նպատակային նշանակությանը համապատասխան պետական գրանցում ստանալու նպատակով:

2. Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԻՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԱՆԱՆԻԱ

2. ԱԴԱՄՅԱՆ ՄԱՐԱՏ

3. ԲԱԴԱԼՅԱՆ ՍՈՆՅԱ

4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

5. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀԱՅԿ

6. ՍՄԲԱՏՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ**